ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ (ԵՏՄ) ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎՈՂ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Հարց** 1. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունից հետո մաքսատուրքերի ինչպիսի դրույքաչափեր են գործելու.*

***Պատասխան**.* «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից վերանայվելու են ապրանքների ներմուծման ժամանակ մաքսատուրքերի գանձման մոտեցումները: Մասնավորապես, միության անդամ երկրներից ապրանքների ներմուծման դեպքում մաքսատուրքեր չեն գանձվելու, իսկ միության անդամ չհանդիսացող երկրներից ապրանքների ներմուծման դեպքում գործելու են միության միասնական մաքսատուրքերը՝ համաձայն ԵՏՄ հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54-րդ որոշման: Նշված կանոնից բացառություն են լինելու այն ապրանքատեսակները, որոնք ներառված են «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 4-րդ հավելվածում: Միության անդամ չհամարվող երկրներից նշյալ ապրանքատեսակների ներմուծման մասով անցումային շրջանում (որը յուրաքանչյուր ապրանքային խմբի համար առանձին սահմանված է հավելվածով) Հայաստանի Հանրապետության կողմից կիրառելու են միության միասնական մաքսատուրքերից տարբերվող՝ ներմուծման մաքսատուրքեր:

***Հարց** 2. Ի՞նչ օրենսդրական փոփոխություններ են լինելու Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունից հետո մաքսային և հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ.*

***Պատասխան**.* Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված՝ վերանայվելու է մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև որոշակիորեն վերանայվելու են միության անդամ երկրներից ՀՀ ներմուծվող ապրանքների համար անուղղակի հարկերի գանձման և Հայաստանի Հանրապետությունից ապրանքների արտահանման դեպքերում ԱԱՀ-հարկի

զրոյական դրույքաչափի կիրառության ու ակցիզային հարկից ազատման ընթացակարգերը:

***Հարց** 3. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունից հետո ավտոմեքենաների ներմուծման դեպքում ի՞նչպիսի արտոնություններ են գործելու.*

***Պատասխան**.* «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի հավելվածներով ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ՀՀ ներմուծվող ավտոմեքենաների համար նախատեսվել է արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում ՀՀ ներմուծվող ավտոմեքենաների համար մաքսային վճարները վճարվելու են ներկայումս գործող՝ ԱԱՀ-ի և մաքսատուրքի դրույքաչափերով:

***Հարց** 4. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունից հետո մաքսային ձևակերպումների ոլորտում ինչպիսի փոփոխություններ են ակնկալվում.*

***Պատասխան**.* Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ պայմանավորված՝ վերանայվելու են նաև մաքսային ձևակերպումների ընթացակարգերը: Մասնավորապես՝

1) ՀՀ մաքսային օրենսգրքով ներկայումս սահմանված 15 մաքսային ռեժիմների փոխարեն կիրառվելու են 17 մաքսային ընթացակարգեր,
2) Եվրասիական տնտեսական միության և Հայաստանի Հանրապետության միջև ընդհանուր սահմանի բացակայությամբ պայմանավորված՝ ԵՏՄ անդամ այլ երկրներից ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից այդ երկրներ արտահանվող ապրանքները ԵՏՄ անդամ երկրներում կամ Հայաստանի Հանրապետությունում ձևակերպվելու են տարանցիկ ընթացակարգով: Տարանցման մաքսային ընթացակարգին համապատասխան, վերոնշյալ ապրանքները պահպանելու են ԵՏՄ ապրանքների կարգավիճակը:

***Հարց** 5. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունից հետո անուղղակի հարկերի գանձման ինչպիսի ընթացակարգեր են գործելու.*

***Պատասխան**.* Նախ, պետք է ընդգծել, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունից հետո միությունից կատարվող ներմուծումների մասով շարունակվելու է ԱԱՀ-ի վճարման մոտեցումը: Այս դեպքում, հիմնական փոփոխությունը կայանում է նրանում, որ ԱԱՀ-ն վճարվելու է ոչ թե մաքսային մարմիններին, այլ հարկային մարմիններին՝ մինչև ներմուծման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը:

Մյուս կողմից, վերանայվելու են միության անդամ այլ երկրներ կատարվող արտահանման գործարքների մասով ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառության և ակցիզային հարկից ազատման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի շրջանակն ու դրանց ներկայացման ժամկետները: Մասնավորապես, նախատեսվում է, որ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառության և ակցիզային հարկից ազատման համար անհրաժեշտ փաստաթղթերը հարկային մարմին պետք է ներկայացվեն արտահանմանը հաջորդող 180 օրերի ընթացքում:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Հարց**. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո կլինեն փոփոխություններ երրորդ երկրների, մասնավորապես՝ Վրաստանի հետ ներկայումս գործող առևտրատնտեսական ռեժիմում:*

***Պատասխան**.* «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) ուժի մեջ մտնելուց հետո կպահպանվեն երրորդ երկրների նկատմամբ ՀՀ կողմից տրամադրված ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունները՝ համաձայն Պայմանագրի 3-րդ հավելվածի 41-րդ կետի 1) ենթակետի:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Հարց** 1. Ինչ կտա Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին էներգետիկայի ոլորտում:*

***Պատասխան**.* Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԵՏՄ-ին հնարավորություն է ստեղծում լիարժեք օգտագործել էլեկտրաէներգիայի ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման համար Եվրասիական Տնտեսական Միության ստեղծման մասին Պայմանագրի պոտենցիալը, դրանք են.

1. օգտագործել միության անդամ պետությունների էներգահամակարգերի տեխնիկական հնարավորությունները՝ մեր երկրում առաջացող էլեկտրաէներգիայի ավելցուկը միասնական շուկայի տարածք արտահանելու համար,
2. օգտագործել մեր էներգահամակարգի տեխնիկական հնարավորությունները միության անդամ պետությունների էլեկտրաէներգիան հարևան ոչ անդամ երկրներ հաղորդելու համար,

3. հնարավորություն ենք ստանում բնական գազը և նավթամթերքները ներմուծել առավել նվազ և կայուն գներով՝ միության արդյունահանող երկրների արտադրողների գներով, չկիրառելով մաքսատուրք, որը լուրջ խթան է Հայաստանի տնտեսության զարգացման համար:

***Հարց** 2. Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին կբերի արդյոք ներկրվող բնական գազի գնի նվազեցմանը:*

Պատասխան. 2015թ. հունվարի 1-ից Հայաստանի ԵՏՄ-ին անդամակցությունը չի բերում բնական գազի գնի նվազեցմանը, քանի որ այդ հարցը կարգավորվել է մինչ այդ (երբ նախատեսվում էր ՀՀ-ի անդամակցությունը Մաքսային Միությանը)՝ ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 2013թ. դեկտեմբերի 2-ին կնքված՝ բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի մասին համաձայնագրով և ՀՀ բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության մասին համաձայնագրով, որոնց համաձայն՝ ՀՀ ներկրվող բնական գազի վրա մաքսատուրք չի կիրառվում, և գնի որոշման բանաձևում հիմք է վերցրվում ՌԴ Օրենբուրգի մարզի համար գործող գինը՝ ավելացրած փոխադրման ծախսերը:

***Հարց** 3. Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին ինչպիսի բացասական ազդեցություն կարող է թողնել Իրանի հետ գազ-էլեկտրաէներգիա փոխանակության վրա:*

Պատասխան. ԵՏՄ-ում գործող իրավա-նորմատիվային բազան որևէ ձևով խոչընդոտ չէ Իրանի հետ գազ-էլեկտրաէներգիա փոխանակության գործարքի համար, հետևաբար Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին որևէ բացասական ազդեցություն չի կարող թողնել:

***Հարց** 4. Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին կարող է արդյոք բերել Իրանից գազի մատակարարման դադարեցման անհրաժեշտությանը:*

Պատասխան. Իհարկե ոչ, Հայաստանի անդամակցությունը ԵՏՄ-ին չի դադարեցնում գազի ոլորտում երրորդ երկրների (մասնավորապես Իրանի) հետ կնքած պայմանագրերը, և չկա սահմանափակում Իրանից գազի ներկրման ծավալների վերաբերյալ:

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Հարց** 1. Հայաստանի Հանրապետությունից դեպի Ռուսաստանի Դաշնություն իրականացվող բեռնափոխադրումների վերահսկությունը սահմանին իրականացվելու մեխանիզմների վերաբերյալ:*

Պատասխան. Չնայած բեռնափոխադրումներն իրականացվելու են Վրաստանի տարածքով տարանցիկ, սակայն որպես Մաքսային միության մեկ

ընդհանուր տարածք սահմանային վերահսկողությունը իրականացվելու է Հայաստանի Հանրապետության սահմանին՝ ՀՀ տարածքից դուրս գալուց դրա վերաբերյալ տեղեկատվությունը կփոխանցվի ռուսական կողմին, իսկ Վրաստանի տարածքով բեռը կփոխադրվի կապարակնքված վիճակում, տարանցիկ:

***Հարց** 2. Վրաստանից դեպի Ռուսաստանի Դաշնություն որպես 3-րդ երկիր բեռնափոխադրումներ իրականացնելու համար թույլտվության պահանջի վերաբերյալ:*

***Պատասխան**.* Բեռնափոխադրման համար կպահանջվի ՌԴ-ի 3-րդ երկրի թույլտվություն, քանի որ Վրաստանը Մաքսային Միության անդամ երկիր չէ: ՀՀ փոխադրողին կտրամադրվի ՌԴ-ի 3-րդ երկրի թույլտվություն, իսկ Մաքսային միության անդամ երկրների միջև բեռնափոխադրումները կիրականացվեն առանց թույլտվության:

***Հարց** 3. Հայաստանի Հանրապետության երկաթուղու ենթակառուցվածքի Եվրասիական Տնտեսական Միության չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ:*

***Պատասխան**.* ԱՊՀ անդամ երկրների երկաթուղային տրանսպորտի խորհրդի որոշումների, պայմանագրերի և համաձայնագրերի դրույթները ըստ էության մնում են ուժի մեջ և շարունակում են գործել Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելուց հետո:

***Հարց** 4. Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների միջև միասնական և միանման սակագների ձևավորման և ապահովելու մեխանիզմների վերաբերյալ:*

***Պատասխան**.* Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների միջև երկաթուղային փոխադրումները իրականացվելու են համաձայն սակագնային քաղաքականությանը, որն ընդունվում է տարեկան սակագնային կոնֆերանսներում, ըստ գործող կարգի:

***Հարց** 5. Ինչ է նշանակում «ազգային (համացանցային) փոխադրող»:*

***Պատասխան**.* «Ազգային /համացանցային/ փոխադրող» - դա փոխադրողն է, որն իրականացնում է բեռների, ուղևորների, ուղեբեռի, բեռնածանրոցի, փոստային առաքումների փոխադրման գործունեություն և ապահովում է գնացքների ձևավորման պլանի իրականացումը անդամ-պետության ողջ ենթակառուցվածքով, այդ թվում նաև հատուկ և ռազմական փոխադրումների գծով: Ազգային /համացանցային/ փոխադրողի կարգավիճակը սահմանվում է անդամ-պետության օրենսդրությամբ:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<u>Մտավոր սեփականության ոլորտ.</u>

Հարց *1. Ի՞նչ ազդեցություն կունենա ապրանքների ներմուծման վրա մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանի մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելը:*

Պատասխան՝ Համաձայնագիրը անդամ 3 երկրների համար արդեն գործում է 4 տարի, մինչ այսօր գրանցումներ չկան: Ամեն երկրի համար գործում է իր գրանցամատյանը: Հայաստանի համար էլ կգործի իր գրանցամատյանը: Եթե միասնական գրանցամատյանը սկսի գործել, ապա այն չի կարող հակասել Հայաստանի Հանրապետությունում եղած գրանցումներին: Այսինքն, ազդեցություն չի ունենա:

Հարց *2. Ինչպե՞ս են կարգավորվելու նույնական կամ շատ նման ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների կիրարկման հետ կապված հարցերը ԵԱՏՄ տարածքում, եթե դրանք անդամ պետություններում գրանցված են տարբեր սուբյեկտների անունով: Մասնավորապես՝ նախկին ԽՍՀՄ-ում հայտնի անվանումները:*

Պատասխան՝ Նկատի ունենալով, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը սահմանափակված է այն երկրի տարածքով, որի օրենսդրությանը համապատասխան գրանցվել է տվյալ ապրանքային նշանը, ԵԱՏՄ անդամ պետություններում գրանցված ապրանքային նշանների նկատմամբ իրավունքները կշարունակեն գործել յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը համապատասխան, ինչպես գործել են մինչ այժմ: Այս մոտեցումն, իհարկե, վերաբերում է նաև նախկին ԽՍՀՄ-ում հայտնի անվանումներին, որոնք ներկայումս տարբեր երկրներում գրանցված են տարբեր անձանց անունով: Այսինքն, փոփոխություններ տեղի չեն ունենա:

Հարց *3. ԵԱՏՄ-ին միանալով Հայաստանի Հանրապետությունը ապրանքային նշանների նկատմամբ իրավունքի սպառման ներկայումս գործող միջազգային սկզբունքից պիտի անցնի մաքսային տարածքում գործող ռեգիոնալ սկզբունքին: Ի՞նչ խնդիրներ կունենան ապրանքների «զուգահեռ ներմուծում» իրականացնող անձիք:*

Պատասխան՝ ԵԱՏՄ-ի Պայմանագրին ՀՀ միանալու մասին Պայմանագրի 3-րդ Հավելվածի 65-րդ կետով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության կողմից մաքսային տարածքում գործող միջազգային սկզբունքից ռեգիոնալ սկզբունքին անցումը կիրականացվի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 3 տարի անց: Հետևաբար, Պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու պահից 3 տարվա ընթացքում ապրանքների «զուգահեռ ներմուծում» իրականացնող անձիք խնդիրներ չեն ունենա: Անցումային 3 տարիների

ընթացքում հնարավոր է, որ ԵԱՏՄ մյուս երկրներն անցնեն միջազգային սկզբունքին (այդպիսի քննարկումներ ներկայումս ընթանում են): Այդ դեպքում ՀՀ գործող օրենսդրության մեջ փոփոխություններ չեն իրականացվի: Մյուս կողմից նախատեսված 3 տարին բավարար ժամկետ է ապրանքների «զուգահեռ ներմուծում» իրականացնող անձանց համար բիզնեսի վերադասավորման համար:

***Հարց** 4. Ինչպե՞ս են կարգավորվելու ԵԱՏՄ անդամ պետություններում պահպանվող գյուտերի և արդյունաբերական նմուշների նկատմամբ իրավունքների հետ կապված հարցերը ԵԱՏՄ տարածքում:*

***Պատասխան**.* Այդ հարցերը կշարունակեն կարգավորվել այնպես, ինչպես ներկայումս կարգավորված են՝ ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր երկրում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով: Որևէ նոր մեխանիզմ չի նախատեսվում:

***Հարց** 5. Արդյո՞ք ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների մտավոր սեփականության մաքսային գրանցամատյաններում հնարավոր կլինի գրանցել ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների ռեզիդենտների ապրանքային նշանները՝ դրանց նկատմամբ իրավունքների խախտումները կանխարգելելու նպատակով:*

***Պատասխան**.* ԵԱՏՄ անդամ պետության մաքսային մարմինը մտավոր սեփականության մաքսային գրանցամատյանում կգրանցի այլ երկրի ռեզիդենտի ապրանքային նշանը միայն այն դեպքում, երբ դա գրանցված է տվյալ ԵԱՏՄ անդամ երկրում:

<u>Որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման ոլորտ.</u>

***Հարց** 1.* «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ՀՀ–ում զուգահեռաբար կգործեն ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը (մշակվել է ՀՀ և ՄՄ տեխնիկական կանոնակարգերի զուգահեռ գործելու ժամանակացույցը), ինչը հնարավորություն կընձեռի ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համապատասխան գործունեություն իրականացնելուն անպատրաստ արտադրողներին սահմանված ժամկետում ուսումնասիրել և պատրաստվել նոր պահանջներին համապատասխան գործունեություն իրականացնելուն, իսկ դրան արդեն պատրաստ արտադրողին՝ գործել իրենց կողմից նախընտրելի տեխնիկական կանոնակարգերին համապատասխան: Ինչպե՞ս է

իրականացվելու նոր պահանջներին տնտեսվարողներին նախապատրաստման գործընթացը:

Պատասխան. ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի զուգահեռ կիրարկման հետ կապված գործընթացները կպարզաբանվեն և կներկայացվեն Հայաստանի տնտեսավարողներին:

Հարց 2. «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ-ում կգործեն տեխնիկական կանոնակարգեր, որոնց կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքը երբևէ չի կանոնակարգվել ՀՀ-ում (օրինակ՝ թեթև արդյունաբերական, կահույքագործական արտադրանքի և այլն): Սա նշանակում է, որ ՀՀ-ում չկա նաև համապատասխան գնահատման մարմին (փորձարկման լաբորատորիա), որը կկարողանա փորձարկել այդ արտադրանքը և արտադրողը համապատասխան գնահատման մարմնի (փորձարկման լաբորատորիա) բացակայության դեպքում ստիպված կլինի այն փորձարկել ԵԱՏՄ անդամ որևէ երկրում: Ինչպե՞ս է լուծվելու այդ խնդիրը:

Պատասխան. Անհրաժեշտ է ՀՀ-ում հիմնել նոր փորձարկման լաբորատորիաներ, որոնք փորձարկումներ կիրականացնեն ԵԱՏՄ հետևյալ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան՝

- «Ցածր լարման սարքավորումների վերաբերյալ» (ТР ТС 004/2011),
- «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին, դիզելային վառելիքին, ռեակտիվ շարժիչներին և մազութին ներկայացվող պահանջների վերաբերյալ» (ТР ТС 013/2011),
- «Քսայուղերին, յուղերին և հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների վերաբերյալ» (ТР ТС 030/2012),
- «Նավթային արտադրանքի վերաբերյալ»,
- «Կահույքի անվտանգության վերաբերյալ» (ТР ТС 025/2012),
- «Հատուկ սննդային արտադրանքի առանձնացված տեսակների, ադ թվում դիետիկ-բուժական և դիետիկ-պրոֆիլակտիկ սննդի անվտանգության» (ТР ТС 027/2012),
- «Օծանելիքագեղարարական միջոցների անվտանգության վերաբերյալ» (ТР ТС 009/2011),
- «Թեթև արդյունաբերության անվտանգության վերաբերյալ» (ТР ТС 017/2011),
- «Գյուղատնտեսական և անտառային նշանակության տրակտորների և կցասայլերի անվտանգության վերաբերյալ» (ТР ТС 031/2012):

<u>Սակագնային կարգավորման ոլորտ</u>.

Հարց *1.* Թվով քանի՞ ապրանքատեսակ է ներառված «2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» Պայմանագրի 4-րդ Հավելվածում /ցանկ ապրանքների և դրույքաչափերի, որոնց հանդեպ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր/ և որոնք են դրանք

Պատասխան. Համաձայն նշված Պայմանագրի 4-րդ Հավելվածի, մի շարք զգայուն ապրանքների հանդեպ անցումային ժամանակահատվածում կկիրառվեն ԵԱՏՄ միասնական մաքսային սակագներից տարբերվող ներմուծման մաքսատուրքի դրույքաչափեր: Մասնավորապես՝ 752 ապրանքատեսակների հանդեպ կկիրառվի ԵՏՄ-ի մաքսատուրքի դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափեր, դրանք են.

Միս և մսից ենթամթերք, կաթ և կաթնամթերք, բրինձ, արևածաղկի ձեթ, մանկական սնունդ, անասնակերեր, ծխախոտի հումք, նավթ, նավթամթերք, հանքահումքային մթերք, այդ թվում՝ անօրգանական քիմիական միացություններ, օրգանական քիմիական միացություններ, դեղագործական մթերք, պարարտանյութեր, մաքրող միջոցներ, կաշվե հումք, բամբակյա և քիմիական թելեր, գործվածքներ քիմիական, ավտոմեքենաներ մարդատար, ավտոբուսներ:

18 ապրանքատեսակների (գյուղատնտեսական մթերք) հանդեպ կկիրառվի ԵԱՏՄ-ի մաքսատուրքի դրույքաչափերից ավելի բարձր դրույքաչափեր, դրանք են՝ ծիրան, սալոր, խաղողի որոշ տեսակներ, ձմերուկ և այլն:

Հարց *2.* Բացի Պայմանագրի 4-րդ Հավելվածում նշված ապրանքների, ի՞նչ այլ ապրանքներին կտրամադրվեն արտոնություններ.

Պատասխան. Միաժամանակ, համաձայն Պայմանագրի 3-րդ Հավելվածի ՀՀ ներմուծման ժամանակ ներմուծման մաքսատուրքերի մասով արտոնություններ կտրամադրվեն (կազատվեն մաքսատուրքի գանձումից) հետևյալ ապրանքներին՝ ռազմական նշանակության արտադրանք, ինքնաթիռների որոշ տեսակներ, շաքարի հումք, սպիտակ շաքար (քվոտայի շրջանակներում), հայկական ԱԷԿ-ի վերանորոգման նպատակով, ինչպես նաև կրթական, գիտական և մշակութային բնույթի ՀՀ ներմուծվող ապրանքներ:

Հարց *3.* Քանի՞ տարի է, որպես անցումային ժամանակահատված, նախատեսված ավտոմեքենաների համար

Պատասխան. Բանակցությունների արդյունքում ավտոմեքենաների համար (ԱՏԳ ԱԱ 87 ծածկագիր) անցումային ժամանակահատվածը սահմանվել է 5 տարի:

Հարց *4.* Ի՞նչ հետևանք կունենա ԵԱՏՄ երկրների կողմից կիրառվող արտահանման մաքսատուրքերի վերացումը:

Պատասխան. ԵԱՏՄ երկրների կողմից կիրառվող արտահանման մաքսատուրքերի վերացումը թույլ կտա հայկական արտադրողներին ունենալ ավելի ցածր գնով հումքային ապրանքներ, ինչը կապահովի միջազգային շուկայում հայկական ապրանքների առավել մրցունակ լինելը:

Հարց *5.* Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցելու պարագայում կպահպանվի՞ արդյոք ազատ առևտրի ռեժիմը Վրաստանի հետ:

Պատասխան. Այո, Հայաստանի և Վրաստանի միջև գործելու է ազատ առևտրի ռեժիմը՝ համաձայն երկու երկրների միջև կնքված ազատ առևտրի մասին Համաձայնագրի և «2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» Պայմանագրի 3-րդ Հավելվածի 41-րդ կետի 1-ին ենթակետի:

<u>Հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման ոլորտ.</u>

Հարց *1.* Ինչպիսի՞ պաշտպանիչ միջոցներ են կիրառվում Եվրասիական Տնտեսական Միության տարածքում:

Պատասխան. Կիրառվում են հակադեմպինգային և հատուկ պաշտպանական միջոցներ՝ տուրքերի և քանակական սահմանափակումների տեսքով:

Հարց *2.* Եթե ներմուծման ժամանակ ապրանքի նկատմամբ կիրառվում է մաքսատուրք և հակադեմպինգային կամ հատուկ պաշտպանական տուրք, ինչպե՞ս է գանձումը իրականացվում:

Պատասխան. Գանձվում է մաքսատուրքը և հակադեմպինգային կամ հատուկ պաշտպանական տուրքը:

Հարց *3.* Ո՞ր ապրանքների նկատմամբ են կիրառվում հակադեմպինգային կամ հատուկ պաշտպանական տուրքեր:

Պատասխան. Այն ապրանքների, որոնց ներկրումը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կայացած որոշումների, վնասել է կամ ստեղծել է վնասի վտանգ երկրի տնտեսության տվյալ ճյուղի համար: Ընդ որում կիրառվում են ինչպես որոշակի ապրանքների, այնպես էլ այդ որոշակի

երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ, մասնավորապես Չինաստան, Թայվան և այլն:

***Հարց** 4*. Հնարավո՞ր է արդյոք, որ Հայաստանի Հանրապետությունը չկիրառի հակադեմպինգային կամ հատուկ պաշտպանական տուրքեր կամ կիրառի մասամբ:

***Պատասխան**.* Ոչ, հնարավոր չէ: Քանի որ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքը համարավելու է Եվրասիական տնտեսական միության ընդհանուր տարածք և ԵԱՏՄ միանալուց հետո կիրառվելու են ԵՏՀ կոլեգիայի կողմից ընդունված որոշումներով սահմանված հակադեմպինգային կամ հատուկ պաշտպանական միջոցները:

***Հարց** 5.* Կարո՞ղ է Հայաստանի Հանրապետությունը նախաձեռնել որևէ ապրանքի գծով ԵԱՏՄ տարածք ներմուծման սահմանափակման գործընթացը:

***Պատասխան**.* Այո կարող է: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև ՀՀ արտադրողները կարող են գրավոր դիմել Եվրասիական տնտեսական Հանձնաժողովին, որևէ ապրանքի մասով ուսումնասիրություն սկսելու համար, որի արդյունքում պարզվում է պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ որոշման անհրաժեշտությունը:

<u>Ոչ սակագնային կարգավորման ոլորտ.</u>

***Հարց** 1.* Ինչպե՞ս են կարգավորվելու ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրներից ներկրվող որոշակի ապրանքների հետ կապված գործընթացները՝ հաշվի առնելով ոչ սակագնային կարգավորման սահմանափակումները:

***Պատասխան**.* Նշված ապրանքախմբերի ներմուծման դեպքում ներմուծող անձը պետք է համապատասխան ապրանքախմբի լիցենզավորման գործունեությունը համակարգող պետական կառավարման (լիազոր) մարմին ներկայացնի սահմանափակման ենթակա ապրանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն և անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց հիման վրա մինչև 15 օրյա ժամկետում կտրվեն համապատասխան լիցենզիա կամ թույլտվություն:

Լիցենզիաների և (կամ) թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը երրորդ երկրներից դեպի ՀՀ ներմուծման և ՀՀ-ից արտահանման համար սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

***Հարց** 2.* Ինչպե՞ս է կատարվելու սահմանափակման ենթակա ապրանքների տեղափոխումը ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքով:

***Պատասխան**.* Նշված ապրանքների տեղափոխումը պետք է կատարվի առանց որևէ սահմանափակումների, իսկ լիցենզիաների և թույլտվությունների

անհրաժեշտություն չի լինի՝ եթե այլ սահմանափակում նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

***Հարց** 3.* Գործելու են, արդյո՞ք ՀՀ-ում տրված լիցենզիաները ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների մաքսակետերով ապրանքների արտահանման և ներմուծման համար:

***Պատասխան**.* Այո: Լիցենզիաները տրվելու են ռուսերեն լեզվով և պարտադիր են ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների մաքսակետերով ապրանքների արտահանման և ներմուծման գործընթացն իրականացնելու համար:

***Հարց** 4.* Ինչպե՞ս պարզել՝ ո՞ր պետական մարմնին պետք է դիմել կոնկրետ ապրանքատեսակի համար լիցենզիա կամ թույլտվություն ստանալու համար:

***Պատասխան**.* Յուրաքանչյուր ապրանքախմբերի համար ՀՀ կառավարության կողմից սահմանվում են լիազոր մարմիններ, որոնք պատասխանատու են ՀՀ-ում նշված ապրանքախմբերի մասով լիցենզավորման գործընթացների բնականոն գործունեությունն ապահովելու համար:

***Հարց** 5.* Սպառիչ են, արդյո՞ք սահմանափակման կամ արգելման ենթակա ապրանքների ցանկերը:

***Պատասխան**.* Այո, դրանք կրում են միասնական բնույթ ԵՏՄ անդամ բոլոր երկրների համար: Թվարկված են սպառիչ ըստ ԱՏԳԱԱ ծածկագրերի և կարող են փոփոխվել միայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ՝ ելնելով ԵՏՄ անդամ պետությունների շուկայի պաշտպանության անհրաժեշտությունից:

Նշված ապրանքների ցանկերը տեղադրված են էլ.կայքում հետևյալ հղմամբ.

http://www.tsouz.ru/db/entr/norm-prav-doc/ediniy_perechen/Pages/default.aspx

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

***Հարց** 1. Արդյոք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավասությունը տարածվում է ԵՏՄ անդամ պետությունների ներքին շուկաների վրա:*

***Պատասխան**.* Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավասությունը տարածվում է միայն անդրսահմանային շուկաներում: Շուկան համարվում է անդրսահմանային, եթե տվյալ ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանները ներառում են երկու և ավելի պետությունների տարածքները:

***Հարց** 2. Ինչպիսի լիազորություններ ունի Եվրասիական տնտեսական հանձնաժողովը տնտեսական մրցակցության ոլորտում:*

***Պատասխան**.* Եվրասիական տնտեսական հանձնաժողովի լիազարությունները գործում են, օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ԵՏՄ անդամ մյուս պետությունների ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից դրսևորած վարքագծի և գործողությունների նկատմամբ կամ ԵՏՄ անդամ մյուս պետություններում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից դրսևորած վարքագծի և գործողությունների նկատմամբ: Իսկ տվյալ պետության սահմանում ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների մրցակցությանն առնչվող իրավահարաբերությունները կարգավորվում են ազգային օրենսդրությամբ:

***Հարց** 3. Ում պահանջով կարող են հարուցվել և ուսումնասիրվել մրցակցության ընդհանուր կանոնների վերաբերյալ գործերը և ինչպես են տնտեսվարող սուբյեկտները տեղեկացվում իրենց նկատմամբ վարչական վարույթի հարուցման վերաբերյալ:*

***Պատասխան**.* Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, ԵՏՄ անդամ պետությունների լիազոր մարմինների, անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտների, ֆիզիկական անձանց պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ, հարուցում և ուսումնասիրում է մրցակցության ընդհանուր կանոնների վերաբերյալ գործերը, որոնք բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա:

Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում Եվրասիական տնտեսական հանձնաժողովը պարտավորվում է տեղեկացնել անդամ պետությունների լիազոր մարմիններին և դիմումատուին նշված դիմումն ուսումնասիրության ընդունելու մասին:

***Հարց** 4.* Նախատեսվում է արդյոք ՀՀ մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությունում կատարել սկզբունքային փոփոխություններ ԵՏՄ անդամակցության շրջանակում:

***Պատասխան**.* ԵՏՄ անդամակցության շրջանակում սկզբունքային փոփոխություններ ՀՀ մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությունում նախատեսված չեն: Որոշակի լրացումներ և փոփոխություններ նախատեսվում է իրականացնել ԵՏՄ անդամակցելուց հետո 6 ամսյա ժամկետում, որոնք հիմնականում վերաբերում են.

– որոշակի հասկացություններին,

– հակամրցակցային համաձայնությունների հատկորոշումներին,

–ընթացակարգային հարցերին,
–պետական մարմինների (տեղական ինքնակառավարման մարմինների) և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների սահմանմանը:

Հարց *5.* Ինչ ակնկալիքներ կարող են ունենալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված տնտեսվարող սուբյեկտները ԵՏՄ անդամ պետություններում իրականացվող պետական գնումների գործընթացին մասնակցելու առումով:

Պատասխան. ԵՏՄ անդամակցելուց հետո Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն կունենան հավասար պայմաններով մասնակցելու ԵՏՄ անդամ մյուս պետությունների պետական գնումների մրցույթներին: ԵՏՄ անդամ պետությունները պարտավոր են ապահովել պետական գնումների մրցույթների վերաբերյալ հայտարարությունների հասանելիությունը էլեկտրոնային հարթակներում ԵՏՄ անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտների համար:

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

Հարց *1.* Երբ և ինչպես են փոխվելու սանիտարահամաճարակային վերահսկողության ենթակա ապրանքների պիտակավորման և փաթեթավորման ներկայացվող պահանջները:

Պատասխան. Սանիտարահամաճարակային վերահսկողության ենթակա ապրանքների պիտակավորման ներկայացվող պահանջները ենթակա են փոփոխման ՀՀ ԵՏՄ անդամակցությունից մեկ տարվա ընթացքում՝ այն է սննդամթերքի մասով փաթեթավորման Մաքսային միության ТР ТС 005/2011 և պիտակավորման Մաքսային միության ТР ТС 022/2011 տեխնիկական կանոնակարգերի համապատասխան, իսկ ոչ պարենային ապրանքների մասով, եթե չկա համապատասխան տեխնիկական կանոնակարգ՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

Հարց *2.* Սննդամթերքի արտահանման համար ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ:

Պատասխան. ՀՀ ԵՏՄ անդամակցության պահից բուսասանիտարական հսկողության ենթակա կամ անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքների մասով ՀՀ գործող ներքին շրջանառության փաստաթղթերը

նույնականանում են ԵՏՄ անդամ պետությունների համապատասխան փաստաթղթերի հետ. մասնավորապես ՀՀ ներքին շրջանառության համար տրված անասնաբուժական սերտիֆիկատները գործում են ԵՏՄ անդամ պետությունների տարածքում, ՀՀ տրված բուսասանիտարական հավաստագիրը գործում է ԵՏՄ անդամ պետությունների տարածքում:

Սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքներից որոշները ենթակա են գրանցման և տրվում է միասնական ձևի գրանցման վկայականը, որը գործում է ԵՏՄ անդամ պետություններում:

ՀՀ կառավարությունը ս.թ. հոկտեմբերի 30-ի նիստում հավանության է արժանացրել համապատասխան ընթացակարգերն ու փաստաթղթերի ձևերը:

Հարց *3.* Ինչ պայմաններով է իրականանալու ներմուծումը:

Պատասխան. ԵՏՄ տարածք անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքներ կարող են ներկրվել, եթե արտադրող ընկերությունը ընդգրկված է երրորդ երկրների ռեեստրում և արտադրանքը համապատասխանում է ԵՏՄ միասնական անասնաբուժական պահանջներին՝ արտահանող երկրի կողմից տրված համապատասխան ձևի անասնաբուժական սերտիֆիկատներով: Սակայն պահպանվելու են ՀՀ ստանձնած ԱՀԿ ՍԲՍ համաձայնագրի պայմանները:

Սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները կարող են ներկրվել միայն սանիտարահիգենիկ պահանջների համապատասխանության դեպքում:

Հարց *4.* Ինչպիսի նոր չափանիշներ են սահմանվելու սննդամթերքի անվտանգության, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական ոլորտներում:

Պատասխան. «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Կերերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք կառավարության որոշումներ ս.թ. հոկտեմբերի 30-ին, որոնք նաև հանդիսացել են Եվրասիական տնտեսական միության անդամակցության ճանապարհային քարտեզով նախատեսված կետեր (ընդունված իրավական ակտերի ամբողջական փաթեթը զետեղված է ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ինտերնետային կայքում):

Ընդունված իրավական ակտերով հստակեցված են գրանցման ենթակա սննդամթերքի ցանկերը, սանիտարահիգիենիկ պահանջները, գրանցման արդյունքում տրվող փաստաթղթերի ձևերը և այլն:

Հարց *5.* ՀՀ կառավարության կողմից սահմանված նոր չափանիշները կառաջացնեն արդյոք լրացուցիչ պարտավորություններ տնտեսվարողների համար:

Պատասխան. Ըստ էության ս.թ. հոկտեմբերի 30-ի իրավական ակտերի ընդունումով պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների վրա լրացուցիչ պարտավորություններ չեն առաջանա:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարց *1.* Գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների և գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների համար անցումային ժամանակահատվածում սահմանվող մաքսատուրքերի դրույքաչափերի և դրանց կիրառման ժամկետների վերաբերյալ

Պատասխան. Մի շարք առաջնահերթ անհրաժեշտ գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների համար (մսի տարբեր տեսակներ, կաթ, կաթ¬նա¬մթերք, միրգ, բանջարեղեն, ցորեն, թեյ, բրինձ, անասնակեր, ծխախոտի հումք և այլն), ինչպես նաև գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների (հանքային պարարտանյութ, թունաքիմիկատներ, գյուղատնտեսական տեխնիկա) համար երրորդ երկրներից ներմուծման մաք¬սատուրքի դրույքաչափերն անցու¬մային ժամանակահատվածում սահմանված են հանրա¬պե¬տությունում ներկայումս կիրառվող դրույքաչափերին համապատասխան: Վերջիններիս փոփոխումը կատարվելու է անցումային ժամանակահատվածի վերջին տարիներին սահուն ձևով: Անցումային դրույքաչափերը և ժամկետ¬ները սահմանված են ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսա¬կան միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» պայմանագրի նախագծին հավանություն տալու մասին» N 41-24 արձանագրային որոշմամբ:

Հարց *2.* 2015-2016 թվականների ընթացքում երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետություն հատիկային բերքի հավաքման կոմբայնների ներկրման թույլատրելի քանակը սահմանելու վերաբերյալ

Պատասխան. 2015-2016 թվականների ընթացքում երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետություն հատիկային բերքի հավաքման կոմբայնների ներկրման թույլատրելի քանակը սահմանելու վերաբերյալ առաջարկվել է վերանայել 2015-2016 թվականների համար նախատեսված «11» և «8» թվերը և փոխարինել համապատասխանաբար «16» և «13» թվերով, հաշվի առնելով «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի կողմից

հատիկային բերքի հավաքման կոմբայնների երրորդ երկրից 2015-2016 թվականների ընթացքում ներկրման ծավալների վերաբերյալ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

***Հարց** 1.* ՀՀ ԿԲ-ն որևէ բանակցություն վարե՞լ է կամ վարու՞մ է արդյոք ԵՏՄ շրջանակում միասնական արժույթի անցման և/կամ ԵՏՄ Կենտրոնական բանկի հիմնադրման վերաբերյալ:

***Պատասխան**.* Տնտեսական ինտեգրման գործընթացներում միասնական արժույթի ներդրման հարցը քննարկվում է ինտեգրացիայի կայացման վերջին փուլում միայն[1]: Այս ուղղությամբ հարկ է փաստել, որ ԵՏՄ ձևավորման համաձայնագրի և ԵՏՄ շրջանակներում արժութային քաղաքականությունների համաձայնեցման ու կոորդինացման համապատասխան դրույթներն առավելապես և միայն վերաբերում են անդամ երկրների շրջանակներում արժութային քաղաքականությունների հնարավորինս ազատականացմանը[2] (*ԵՏՄ համաձայանգրի Հոդված 64, կետ 1.1 և 4*): Եվ ինչպես տարբեր հարթակներից բազմիցս հայտարարել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ղեկավար Վիկտոր Խրիստենկոն **միասնական արժույթի ստեղծման և/կամ ԵՏՄ միասնական Կենտրոնական բանկի հիմնադրման վերաբերյալ բանակցություններ կամ աշխատանքներ կողմերը չեն վարել, չեն վարում և այդ հարցը օրակարգից բացակայում է**:

Հարկ է հավելել նաև, որ բանակցային գործընթացներում կարևորվել է կենտրոնական բանկերի՝ որպես դրամավարկային իշխանությունների անկախության պահպանման սկզբունքը: Այդ մասին են վկայում նաև ոլորտում տեղի ունեցող զարգացումները. մասնավորապես, ՌԴ կենտրոնական բանկը հայտարարել է, որ 2015թ-ի սկզբին արդեն, որդեգրելով լողացող փոխարժեքի

---

[1] Այսպես, օրինակ թեև Եվրամիության շրջանակներում միասնական արժույթի կամ հաշվարկային միավորի վերաբերյալ հարցադրումներ բարձրացվում էին դեռևս 1960-70-ական թվականներին, սակայն փաստացի վերջինիս ներդրումն իրականացվեց միայն 2000-ականների սկզբին, երբ անդամ երկրները հասել էին ապրանքային, կապիտալի և աշխատուժի շուկաների ինտեգրման բարձրագույն մակարդակի, մինչդեռ վերջին տնտեսական ճգնաժամը որոշակիորեն դրսևորեց նաև տվյալ արժութային գոտու խոցելիությունը և ժամանակավրեպ լինելու հանգամանքը:

[2] Այս ուղղությամբ պետք է փաստել, որ ՀՀ արժութային կարգավորման միջավայրը դեռևս 1996թ-ից գործում է առավելապես ազատականացման սկզբունքների ներքո: Հետևաբար, ԵՏՄ համաձայանգրի շրջանակներում, ըստ էության, կապահովվի Միության ներկայիս անդամ մի քանի երկրներում դեռևս պահպանվող որոշակի արժութային սահմանափակումների վերացումը և ՀՀ-ում ներակայումս գործող ռեժիմին համահունչ միջավայրի ձևավորումը: Սա նշանակում է, որ այս ուղղությամբ ՀՀ-ը կարող է համարվել ուղենիշ մյուս անդամ երկրների համար, ինչը փաստում են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչները:

ռեժիմ, անցում կկատարի գնաճի նպատակադրման ռազմավարությանը, ինչը Հայաստանում գործում է դեռևս 2006թ-ից՝ որպես դրամավարկային քաղաքականության հիմնական ռազմավարություն: Հետևաբար ԵՏՄ շրջանակներում **ՀՀ կենտրոնական բանկն ունի հստակ դիրքորոշում՝** հավատարիմ մնալ դրամավարկային ու արժութային քաղաքականությունների որդեգրած սկզբունքներին՝ **վարելով անկախ դրամավարկային քաղաքականություն՝ գնաճի նպատակադրման ռազամավարության ներքո**, ինչպես նաև **ապահովելով լողացող փոխարժեքի ռեժիմ՝ ազատականացված արժութային քաղաքականության սկզբունքների ներքո**:

Հարց *2.* Սպասվում են արդյոք ապրանքների գների թանկացումներ՝ պայմանավորված ԵՏՄ ՀՀ անդամակցությամբ:

Պատասխան. ԵՏՄ անդամակցության ներքո ներմուծված ապրանքատեսակների ընթացիկ մաքսային դրույքաչափերը համապատասխանեցվելու են միության շրջանակում գործող մաքսադրույքներին, ինչի հետևանքով հնարավոր է երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների գծով որոշակի գնաճային դրսևորումներ՝ 2015-2017թթ ժամանակահատվածում: ՀՀ ԿԲ գնահատականների համաձայն ՀՀ ԵՏՄ անդամակցությունից բխող **առաջնային ազդեցությունը ընդհանուր գնաճի վրա** 2015 **թ-ի համար գնահատվում է առավելագույնը** 0.4 **տոկոսային կետ**: Հատկանշական է, որ առանց բանակցային գործընթացում առանձին ապրանքատեսակների գծով ձեռքվերված մաքսային արտոնությունների այս գնահատականը կտատանվեր 1.0-1.5% միջակայքում: (ԿԲ կողմից ԵՏՄ անդամակցության գնաճային ազդցությունների գնահատման մանրամասն վերլուծությունը ներկայացված է *«Գնաճի հաշվետվություն. Դրամավարկային քաղաքականության ծրագիր՝ 2014թ. IV եռամսյակ»* հրապարակման մեջ):

Հարց *3. Եվրասիական Տնտեսական Միությանն անդամակցության արդյունքում ինչ զարգացումներ են սպասվում ՀՀ ֆինանսական կազմակերպությունների կարգավորման և վերահսկողության ոլորտներում:*

Պատասխան. Եվրասիական տնտեսական միության տարածքում ֆինանսական ծառայությունների առևտուրը կարգավորող փաստաթղթերի համաձայն՝ ԵՏՄ անդամ-պետությունները իրականացնելու են ֆինանսական ծառայությունների կարգավորման դաշտի հարմոնիզացիա՝ միջազգային ստանդարտներին (Բազելյան կոմիտեի կողմից հրապարակված «Արդյունավետ վերահսկողության հիմնարար սկզբունքներին», Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից սահմանված վերահսկողական սկզբունքներին և այլն) համապատասխան: Կարգավորման դաշտի հարմոնիզացիայի արդյունքում անդամ-պետություններում հնարավոր

կլինի իրականացնել ֆինանսական կազմակերպություններին տրվող լիցենզիաների փոխադարձ ճանաչում:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման, վերահսկողության և կայունության խնդիրներին, ապա կարող ենք հավաստել, որ ՀՀ ֆինանսական համակարգում կիրառվող քաղաքականությունն ամբողջությամբ հիմնված է միջազգայնորեն ճանաչված լավագույն փորձի և սկզբունքների վրա: Ինչպես նշվեց, նախատեսվում է ԵՏՄ ամբողջ տարածքում ևս ֆինանսական համակարգի կարգավորումն իրականացնել միջազգային ընդունված ստանդարտների հիման վրա: Վերջինս նշանակում է, որ ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման ոլորտում ՀՀ կենտրոնական բանկը կպահպանի իր կողմից որդեգրված քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, անդամակցությունը ԵՏՄ-ին հնարավորություն կտա ընդլայնելու ֆինանսական ծառայությունների շուկան և մատուցվող ծառայությունների շրջանակները:

Հարց *4. Ինչ փոփոխություններ են սպասվում արժութային արժեքների տեղափոխման կարգում՝ պայմանավորված Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ-ի անդամակցությամբ:*

Պատասխան. Սկսած 2015թ. հունվարի մեկից՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների, ինչպես նաև այլ երկրների միջև սահմանվելու է ֆիզիկական անձանց կողմից առանց գումարային չափի սահմանափակման արժութային արժեքների և ըստ ներկայացնողի արժեթղթերի տեղափոխման ռեժիմ: Եվրասիական տնտեսական միության սահմանով դեպի այլ երկրներ արժութային արժեքների, գանձապետական տոմսերի և ճանապարհային չեկերի միանվագ ներմուծման և արտահանման դեպքում գործելու է պարտադիր հայտարարագրման պահանջը՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ընդհանուր գումարի չափը գերազանցելու դեպքում: